

# Զ Գ Ո Ն Ե Ղ Ե՛Ք, ՊՐՈՎՈԿԱՑԻԱ Է

Հուլիսի 7-ի լույս գիշերը Ստեփանակերտը շփեց: Կրկնանից արձակված հրացանային զարկը մարդկանց ականջում հնչեց որպես հրահրանքային պայթյուն:

Ինչ է պատահել, ո՞վ է կրակել, ո՞ւմ վրա են կրակել՝ խառնիճադանն այս հարցերը մարդիկ տալիս էին իրար և, պատասխան չգտնելով, շտպարում՝ ով մեկնեալով, ով հետիոտն, Կրկնան, որտեղից շարունակվում էին կրակոցները: Մարդիկ գնում էին՝ իրենց հոգու մեջ ունենալով տևական գործադուլներից ծնված դառնություններ, հոգու վրա ծանրացած ունենալով այն անհեռակար գալիք օրերը, որոնք չեն խոստանում «դարաբաղյան հանգույցի» լուծումը, հոգու մեջ պահելով այն վիրավորանքները, որոնք վերջի պես միտում են ու չկա մի սպեղանի, որ դրվի բաց այդ վերջի վրա: Ամբողջ տարի ու կես վիրավորեցին մեզ, փամառեցին մեր ազգային ազնիվ ձգտումը՝ մենք մեզ նման մնալու, մեր երեխաներին մեզ պես մեծացնելու, նրանց մեծացնել կարողանալու իրավունքի համար: Այսպանեցին մեզ, կոշտ կրունկի տակ տորեցին մեր ազգային ու մարդկային արժանապատվությունը:

Բայց էլի արցախցին չընդգրեց հավասարակշռությունը, վիրավորված ու արժանապատիվ՝ թույլ չըտվեց, որ հոգու մեջ շարյաց սերմը ծլարձակի, ձեռքը չըտարավ դեպի մահաբեր գործիք: Մարդկային նախահիմքը ամուր էր ու չմասանվեց:

Բայց եկե՛ք նաև հիշենք, որ մեր ազգային շարժման այն 17 ամիսներին մեկ անգամ չէ, որ կամովին որոգայթի մեջ ընկանք, որոնք բացահայտ, անթափույց, ապերասան ձևով պատրաստում էին մեր ընդդիմախոսները: Եկե՛ք մի պահ հիշենք ոչ հեռավոր օրերը. Բաֆլում արված մի անպատաս

խանառու, արդար լինենք և միշտ բառը ասենք՝ պրովոկացիոն հայտարարությունը առիթ դարձավ, որպեսզի գործադուլի ալիքը իր տակ առնի ամբողջ մարզը:

Հիշենք Խոջալուի դեպքերը անցյալ տարվա սեպտեմբերին, որը և պատճառ ու առիթ հանդիսացավ տների հրկիզումների ու մասսայական տեղահանության, մարզում հատուկ դրություն մըտցրնելուն:

Տեղը եկել է, հարցնենք. մեր տևական գործադուլների օգուտն է շատ, թե՛ վրնասը, արդյո՞ք մեր բողոքը, մեր հոգու ցասումը, մեզ վրա գործադուլող ներումից ծնվող ընդվզումը չենք կարող արտահայտել պայքարի այլ միջոցներով:

Մեր մի շարք միտինգների բարձր ոգին իմ մտքի շողշողուն ապացույցներն են:

Դիմելով Արցախի հայ աշխատավորությանը, կցանկանալի արժանքով այն միտքը, որ մեր գլխավոր նպատակի՝ պատմական արդարության վերահաստատման գաղափարի մեջ մտնում են նաև փախստականներին աշխատանքով ու բնակարաններով ապահովելու խընդիրը, մեր փայլաված էկոնոմիկայի վերականգնման նպատակը, մեր գյուղերը շենացնելը, սոցիալական բազմաբնույթ պրոբլեմների լուծումը, վերջապես բարգավաճ, ծիծղուն Արցախի, հայեցի Արցախի վերահաստատումը:

Խորհուրդող, դի՛ք այդ նա նապահը անցնելու համար մեզ պետք է եռանդ, ոգու կորով և մտքի պարզություն: Որպեսզի կարողանանք արժանի պատասխան տալ մեր ընդդիմախոսներին, պատասխանենք արարչական գործողություններով և ոչ երբեք «սուսգայթյան» միջոցներով:

Դառնա՛նք նախկին մտքին և հիշենք Խաչեն տափի շուրջ բարձրացրած իրարանցումը, ազգային կրկերի սպեկուլյատիվ շահարկումը: Հիշենք պատասխանատու պաշտոն-

յաների անպատասխանատու հայտարարություններն ու հրապարակումները հանրապետական մամուլի էջերում:

Դառն օրհնակներ են, բայց եկե՛ք այդ դառն ու դաժան օրհնակներից դասեր փողենք, հասկանանք, որ երբ որևէ մի լուսավոր շող է երևում մարզում փառափառ վիճակի կայունացման ուղղությամբ, երբ որևէ փորձ է արվում հանգույցի լուծման համար, մարզից դուրս հղացած և մարզում գործող մութ ուժերի միջոցով իրագործվում է այդ հղացած ու մանրամասն մշակված պլանը: Որպեսզի խափանվի մեր գործը: Եվ սկսվում են օրհնականության խախտումները, շղթայական ռեակցիայով մի գործողությունը ծնում է իրեն շարունակող այլ գործողություն:

Ահա այստեղ է, որ մենք պետք է ավելի փանսրափ լինենք, մեր զգացմունքները ենթարկենք մեր խոհեմությանը և ճշգրտորեն որոշենք, թե ինչպիսի փայլ անենք, որ խոտորվենք արդարության, օրհնականության, դեպի ճշմարիտ նպատակը տանող նախապահից:

Ուրեմն, թույլ շտանք, որ մի պրովոկատոր, մի խժողով ուժ հանի մեզ հավասարակշռությունից, մի այնպիսի գործողությունների, որոնք կարող են խանգարել մեր ազգային նպատակների իրագործմանը: Հիշենք, որ դրան է ձգտում այդ պրովոկատորը, խժողով այդ ուժը:

Բարձր լինենք ազգային թշնամանքից, մեզնից հեռու վանենք «Ակն ընդ ական, ատամն ընդ ատամն» ոչ միշտ կիրանելի վաբաբիքը:

Իմ գլխավոր մտքին անցնելուց առաջ կցանկանալի, որպես հիշեցում ու զգուշացում, ահա թե ինչ ասել հրացանից արձակվել է կրակոց: Մարդիկ շիմանալով ինչու՞մն է բանը, շտապել են դեպի վայրը: Մութ գիշեր, իրար շտեմող աշ-

խեր, ուրվականի պես հագիվ նշմարվող մարդիկ ու ահույի կասկածանք, որ կարող է ծնել բնագոյական գործողություն: Ինչ կլինի հետևանքը, եթե օրհնապահ ուժերը չկանխեն այդպիսի գործողությունները, իրարից չվանեն հակադիր ուժերը:

Երախտագիտություն հայտնելով իրավապահական ուժերին, հիշենք, որ եթե հանկարծ, թող շարասցե այդպիսի մի հեռավորություն, ու հանկարծ այդ ուժերը չկարողանան վանել հանդիպական ուժերը, ապա ի՞նչ հետևանքներ կարող են ծնվել: Հիշենք այդ և շանենք անթույլատրելի որևէ փայլ: Վերհիշենք Մ. Ս. Գորբաչովի այն նկատումը, որ ամեն մի խրթին հարց և հատկապես ազգամիջյան հարաբերությունների հարցը պետք է լուծվեն փոխզիջման, փոխըմբռնման ոգու գերիշխանությամբ պայմաններում:

Հավատանք վերականգնման բարձր գաղափարներին, որ հրապարակել է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը: Արդյո՞ք վերականգնման գաղափարների կենսագործման մեծ ապացույցը չէր ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարը: Եթե այդպես է, ապա հավատանք նաև կուսակցության և խորհուրդների գերագույն իշխանության այն որոշմանը, որով հեղինակավոր մի հանձնախմբի հանձնարարված է հիմնովին ուսումնասիրել դարաբաղյան հարցը և այն դեպի երկրի ամենաբարձր ատյանի փնտրելվանք:

Հեռավորություն տանք, որպեսզի այդ հանձնախումբը, որ օրերս կծանանք մարզը, կարողանա հանգիստ պայմաններում աշխատել, կարողանա թափանցել պրոբլեմի էության մեջ, նախաձեռնել մեր ազգային նպատակի բարձր բովանդակությունը:

Որպեսզի դա հեռավոր լինի, մենք պետք է կասեցնենք ամեն մի պրովոկացիա, մարենք ամեն մի բռնկվող կայծ, թույլ չտանք հակառակ ուժին մեզ ներս շնչել խժողովությունների, ազգամիջյան ընդհարումների մեջ:

Զգո՛ն եղե՛ք, արցախցիներ:

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ